

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ
Հաստատված է Տնօրենների Խորհրդի Թիվ 06/20 որոշմամբ

«ԱՎՏՈ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Վարկի գումար	500,000 – 15,000,000 ՀՀ դրամ		
Արժույթ	ՀՀ դրամ		
Վարկի ժամկետ (ամիս)	6 - 12	13 - 24	25 - 60
Տարեկան անվանական տոկոսադրույք	13%	15%	17%
Ամսական սպասարկման վճար (վարկի տրամադրման գումարից)	0.2% – 0.7%		0.5% – 0.9%
Տրամադրման միանվագ միջնորդավճար (վարկի գումարից)	3%		
Տարեկան փաստացի տոկոսադրույք	25.7% - 45.2%	24.8% - 41.4%	31.1% - 45.4%
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	0		
Մարման եղանակ	անուիտետային, հավասարաչափ, ճկուն գրաֆիկ		
Տույժեր	Ժամկետանց տոկոսագումարի և մայր գումարի նկատմամբ օրական 0.13%		

**«ԱՎՏՈ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ
ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

	ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ
1	Վարկառուի նկարագիր	ՀՀ քաղաքացի և/կամ ռեզիդենտ ֆիզիկական անձիք
2	Վարկառուին/երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> ✓ Վարկառուի տարիքը 21 – 65 տարեկան՝ համապատասխանաբար դիմելու պահին և վարկային պայմանագրի ժամկետի ավարտի պահին, ✓ Վարկառուի և երաշխավորների (առկայության դեպքում) դրական վարկային պատմություն՝ «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներքին չափանիշներին համապատասխան, ✓ Ֆինանսական երաշխավորներ կարող են համարվել ֆիզիկական/իրավաբանական անձիք, ովքեր ունեն փաստաթղթորեն հիմնավորված կայուն եկամուտ կամ անշարժ գույք, որը համարժեք է վարկի գումարին, ✓ Վարկառուի և երաշխավորների համապատասխանություն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ - ի վարկային քաղաքականությանը և ներքին կանոնակարգերով սահմանված այլ չափանիշներին:
3	Վարկի նպատակ	Սպառողական

4	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
5	Վարկի տրամադրման նվազագույն և առավելագույն սահմանաչափեր	500,000 – 15,000,000 ՀՀ դրամ
6	Վարկի նվազագույն և առավելագույն ժամկետներ	12 – 60 ամիս
7	Մարման ժամանակացույց	<ul style="list-style-type: none"> ✓ <i>Անուիտետային վճարումներ</i> – վճարումներ, որի դեպքում վարկի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում յուրաքանչյուր ամիս հաճախորդը կատարում է միևնույն չափի վճարումներ, ✓ <i>Հավասարաչափ վճարումներ</i> – հաճախորդը վճարում է յուրաքանչյուր ամիս հավասարաչափ մայր գումար, որի արդյունքում տոկոսավճարների հանրագումարը ամեն ամիս նվազում է ✓ <i>Ճկուն մարման ժամանակացույց</i> – վարկի մայր գումարի մարումները բաշխվում են մարման ժամանակաշրջանի վրա անհավասարաչափ
8	Վարկի տրամադրման եղանակ	Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ Վարկառուի բանկային հաշվին կամ «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈւՎԿ ՓԲԸ գործընկեր բանկում առկա համապատասխան հաշվին փոխանցում կատարելու միջոցով կամ բանկային չեկի/հանձնարարականի միջոցով, իսկ գործող պարտավորությունների մարման մասով՝ համապատասխան ֆինանսական կազմակերպություն փոխանցում կատարելու միջոցով:

9	Վաղաժամկետ մարում	<ul style="list-style-type: none"> ✓ Վարկառուն իրավունք ունի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարելու վարկը և կատարելու պայմանագրով սահմանված այլ պարտականությունները առանց տույժ վճարելու, ✓ Վարկի վաղաժամկետ ամբողջական մարման պարագայում վարկառուն վճարում է վճարման օրվա դրությամբ հաշվարկված վարկի սպասարկման և այլ վճարները, տոկոսները և վարկի մայր գումարը, ✓ Վարկի վաղաժամկետ մասնակի մարման պարագայում գումարը ուղղվում է վարկի մայր գումարի մարմանը և համամասնորեն նվազեցվում են վարկի հետագա ամսվա (ամիսների) մարման ենթակա տոկոսագումարները, եթե հաճախորդը չի տրամադրել այլ հանձնարարական:
10	Զուգահեռ վարկեր վարկառուների խմբին/փոխկապակցված անձանց տվյալ վարկատեսակի շրջանակներում	<ul style="list-style-type: none"> ✓ Զուգահեռ վարկերի առավելագույն քանակ - 3 ✓ Զուգահեռ վարկերի առավելագույն գումարը – 15,000,000 ՀՀ դրամ
11	Տրանշեր Транши	-
12	Ապահովվածություն	<ul style="list-style-type: none"> ✓ Մինչև 20 տարվա արտադրության մեքենա, բացառությամբ ՌԴ և Չինաստանի արտադրության մեքենաների, ✓ Մինչև 7 տարվա՝ ՌԴ և Չինաստանի արտադրության մեքենաների, ✓ Միաժամանակ. <ul style="list-style-type: none"> - Մինչև 15 տարվա արտադրության մեքենաների համար վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը կազմում է 75%, - 16 – 20 տարվա արտադրության մեքենաների համար վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը կազմում է 50%,

		- Վարկային կոմիտեի որոշմամբ կարող է պահանջվել լրացուցիչ ապահովվածություն
13	Գրավի գնահատում	✓ Անվճար, Ընկերության կողմից
14	Գրավի ձևակերպում	2,000 ՀՀ դրամ (իրականացվում է հաճախորդի կողմից Ճանապարհային Ոստիկանությունում)
15	Կասկո ապահովագրություն	✓ Ըստ Վարկային Կոմիտեի որոշման
16	Վճարունակության գնահատում	<ul style="list-style-type: none"> ✓ հաճախորդի սոցիալական բնութագիր, ✓ հաճախորդի վարկային պատմություն, ✓ գրավի գնահատում, ✓ իրավական ռիսկեր, ✓ Ֆինանսատնտեսական վերլուծություն, համաձայն վարկատեսակի գծով ֆինանսատնտեսական վերլուծության ուղեցույցի
17	Վարկերի դիտարկում (հաստատում/մերժում)	Համաձայն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ Վարկավորման ընթացակարգով սահմանված որոշումների կայացման իրավասությունների
18	Որոշման կայացման ժամկետ	1 աշխատանքային օր (հաճախորդի կողմից փաստաթղթերի ամբողջական փաթեթի առկայության դեպքում)

19	Որոշման մասին տեղեկացնելու ժամկետ	1 աշխատանքային օր
20	Վարկը տրամադրելու ժամկետ	1 աշխատանքային օր (գրավի պայմանագիրը պետական գրանցում ստանալուց հետո)
21	Վարկի ձևակերպման վայրը	«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈԻՎԿ ՓԲԸ գրասենյակներում կամ «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈԻՎԿ ՓԲԸ հետ համագործակցող/գործընկեր կազմակերպության գործունեության վայրում
22	Վարկային հայտի մերժման հնարավոր պատճառներ	<ul style="list-style-type: none"> ✓ սահմանված նվազագույն պահանջներին չբավարարման դեպքում (1, 2 և 12 կետեր), ✓ հաճախորդի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի և այլ հիմնավորումների չներկայացման, կեղծ փաստաթղթերի կամ անարժանահավատ տեղեկատվության ներկայացման դեպքում, ✓ վարկային կոմիտեն չի բավարարել վարկային հայտը՝ հաշվի առնելով գործարքի ռիսկայնությունը կամ առկա այլ ռիսկերը, վարկային կոմիտեի իրավասությամբ սահմանված այլ դեպքերում, այդ թվում. <ul style="list-style-type: none"> - դրական վարկային պատմության բացակայություն, - իրավական ռիսկերի առկայություն, - եկամուտների անբավարարություն, - գրավադրվող մեքենայի բնութագրիչների անհամապատասխանություն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈԻՎԿ ՓԲԸ կողմից սահմանված պահանջներին
23	Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	<ul style="list-style-type: none"> ✓ Վարկառուի/գրավատուի անձնագիր և սոցիալական քարտ կամ նույնականացման քարտ, ✓ Վարկառուի եկամուտները հավաստող փաստաթղթեր/ինֆորմացիա, ✓ Սվտոմեքենայի սեփականության իրավունքի վկայականը,

		<ul style="list-style-type: none"> ✓ Ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր, ✓ Այլ փաստաթղթեր (Վարկային Կոմիտեի պահանջով):
24	Տարեկան տոկոսադրույք և վարկատեսակի այլ պայմաններ	<p>Վարկատեսակի տոկոսադրույքը, տրամադրման վճարը և այլ պայմանները սահմանվում են «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարկատեսակների պայմաններով և սակագներով, որի մասին հաճախորդները ծանուցվում են կազմակերպության բոլոր տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև պայմանները նկարագրող ինֆորմացիոն թերթիկների և կազմակերպության ինտերնետային կայքի միջոցով</p>
ԶԳՈՒՇԱՅՈՒՄ		<ul style="list-style-type: none"> ❖ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԵՎ «ԱՔՌԱ» ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ, ❖ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԵՎ/ԿԱՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԻՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ, ❖ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ՆԱԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԳՈՒՅՔՈՎ (ՏՈՒՆ, ԲՆԱԿԱՐԱՆ, ԱՎՏՈՄԵՔԵՆԱ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՎ ԱՅԼՆ), ԵԹԵ ԱՌԿԱ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆ ԲԱՎԱՐԱՐ ՉԷ «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ – Ի ՆԿԱՏՄԱՍԲ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ, ❖ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ԻՐԵՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՅՔՈՎ (ՏՈՒՆ, ՄԵՔԵՆԱ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԿԱՄ ԱՅԼ ԳՈՒՅՔ) ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿՐՈՒՄ «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ – Ի ԱՌՋԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐԵՆՑ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,

- ❖ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ,
- ❖ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՅՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,
- ❖ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԻ ՀԱՍՅԵԻՆ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ՔԱՂՎԱԾՔԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿ ՉԻ ԸՆՏՐՈՒՄ: ԱՆԿԱԽ ՆՇՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՔԱՂՎԱԾՔԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ՝ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅՆ ՍՏԱՆԱԼ (ԴԻՄԵԼՈՒ ՊԱՀԻՆ) ՎԱՐԿԱՏՈՒԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ԱՌՋԵՌՆ: ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ԱՆՎՃԱՐ Է:
- ❖ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է: www.fininfo.am
- ❖ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՅՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է:

	<p>❖ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿԵՔՄԱՆԸ ՀԱԶՈՐԴՈՂ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԱՐԵԼՈՎ ՎԱՐԿԸ ԵՎ ԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:</p>
--	--

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A վարկի գումարը (վարկատուի կողմից վարկառուին տրամադրված վարկի սկզբնական գումարը)

n վարկի մարմանն ուղղված վճարի թիվը N վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

K_n վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

D_n վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Վարկի գումար	5,000,000 ՀՀ դրամ
Անվանական տարեկան տոկոսադրույք	17%
Վարկի ժամկետ	48 ամիս (անուիտետային վճարումների դեպքում)
Վարկի տրամադրման միանվագ վճար	3%

Սպասարկման ամենամսյա վճար	0.5%
Մարումներ	անուիտետային
Վարկի տրամադրման օր	08 հունիս 2020թ.
Առաջին մարման օր	08 հուլիս 2020թ.
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 32.0%	